ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

««ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ, «ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԵՎ «ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 259-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՎ «ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ «ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ» ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԴԱՆԻԵԼ ԻՈՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԿԱ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, նշված գործով քննության առնելով «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության՝ «Անկախ դիտորդ» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Դանիել Իոննիսյանին որպես վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Սահմանադրական դատարանի վարույթում է գտնվում ««Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026

թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» միավորված գործը:

2. «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցությունը միջնորդել է նշված գործով որպես վկա հրավիրել Դանիել Իոննիսյանին՝ պատճառաբանելով, որ սույն գործի լուծման համար առանցքային նշանակություն ունի «(…) Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգող, «Անկախ դիտորդ» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Դանիել Իոննիսյանի հրապարակային հարցազրույցը **/12.06.2026 թվականին Պետրոս Ղազարյանին տրված հարցազրույց/,** որտեղ հանդես է եկել հստակ և ծավալուն պնդումներով՝ կապված նախընտրական շրջանում տեղ գտած ընտրակաշառքի զանգվածային կիրառման, դրա իրական ծավալների, տոկոսային հարաբերակցության և իրավապահ մարմինների կողմից դրանց բացահայտման արդյունավետության աստիճանի վերաբերյալ:

(…)

Քանի որ Դանիել Իոննիսյանի կողմից հնչեցված հայտարարությունները վերաբերում են անմիջականորեն ընտրական իրավունքի սահմանադրական սկզբունքների ենթադրյալ խախտումներին և ընտրությունների օրինականությանը, ավելին՝ վերջինիս հայտնի են կամ ողջամտորեն կարող են հայտնի լինել այնպիսի տեղեկություններ, որոնք թեև տվյալ հարցազրույցի ժամանակ չեն բարձրաձայնվել, սակայն կարող են սույն գործի լուծման համար էական նշանակություն ունենալ (…)», ուստի՝ «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցությունը, վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 43 և 55-րդ հոդվածները, անհրաժեշտ է համարում որպես վկա հրավիրել Դանիել Իոննիսյանին:

3. Քննության առարկա դարձնելով «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության միջնորդությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Սահմանադրական դատարանը նիստին որպես վկա հրավիրում և լսում է այն անձանց

ցուցմունքները, որոնց կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ փաստ: Վկա հրավիրելու վերաբերյալ կողմի միջնորդությունը Սահմանադրական դատարանը կարող է մերժել պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ:

Խնդրո առարկա հոդվածի վերլուծությունից բխում է, որ անձը Սահմանադրական դատարանում վկայի դատավարական կարգավիճակ կարող է ձեռք բերել այն դեպքում, երբ վերջինիս ցուցմունքներով հնարավոր է բացահայտել գործով պարզելու ենթակա որևէ փաստ:

Սույն դեպքում Դանիել Իոննիսյանին վկայի դատավարական կարգավիճակով հրավիրելու միջնորդության հիմքում դրված է այն ենթադրությունը, որ վերջինիս հայտնի են կամ կարող են ողջամտորեն հայտնի լինել տեղեկություններ, որոնք թեև վերոնշյալ հարցազրույցի ժամանակ չեն բարձրաձայնվել, սակայն կարող են սույն գործի լուծման համար էական նշանակություն ունենալ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը բավարար չափով փաստարկված չէ այն առումով, որ արտահայտված կասկածը հիմնված է սոսկ ենթադրությունների վրա, որպիսիք բավարար չեն Դանիել Իոննիսյանին վկայի դատավարական կարգավիճակ տալու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

««Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ»

միավորված գործով «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության՝ «Անկախ դիտորդ» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Դանիել Իոննիսյանին որպես վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

29 հունիսի 2026 թվականի
ՍԴԱՈ-143